

**«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները:

**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. **Գիտական գործունեություն՝** նոր գիտելիքների ձեռքբերմանն ու օգտագործմանն ուղղված ստեղծագործական գործունեություն:

2. **Գիտատեխնիկական գործունեություն՝** տեխնոլոգիական, ճարտարագիտական, տնտեսական, սոցիալական, հումանիտար և այլ հիմնախնդիրների լուծմանն ուղղված գիտական գործունեություն:

3. **Հիմնարար գիտական հետազոտություն՝** բնության օրենքների, մարդու և հասարակության գործունեության ու զարգացման հիմնական օրինաչափությունների մասին նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված տեսական կամ փորձարարական գիտական գործունեություն:

4. **Կիրառական գիտական հետազոտություն՝** գործնական նպատակների իրականացման և կոնկրետ խնդիրների լուծման նպատակով հիմնականում նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն:

5. **Ինովացիոն գործունեություն՝** գիտության, տնտեսության և հասարակության առաջընթացն ապահովող նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, ծառայության կամ արտադրանքի ստեղծմանն ուղղված գործունեություն:

6. **Գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունք** (այսուհետ՝ գիտական արդյունք)՝ տեղեկատվության ցանկացած կրիչի վրա գրանցված նոր գիտելիք:

7. **Գիտական կամ գիտատեխնիկական ծրագիր և նախագիծ՝** նախատեսվող հիմնարար և (կամ) կիրառական գիտական հետազոտությունների բովանդակությունը,

հիմնավորվածությունը, արդիականությունը, նպատակներն ու դրանց ձեռքբերման ուղիները, խնդիրներն ու դրանց լուծման մեթոդները և ժամկետները պարունակող փաստաթուղթ:

8. **Գիտահետազոտական աշխատանք**՝ գիտական-որոնողական, ինչպես նաև գիտական հիպոթեզների ստուգման, գիտական ընդհանրացման, նոր գիտելիքների ձեռքբերման և բնության ու հասարակության զարգացման օրինաչափությունների բացահայտման նպատակով իրականացվող հիմնարար և (կամ) կիրառական գիտական հետազոտությունների և գիտափորձերի հետ կապված աշխատանք:

9. **Գիտական աշխատող**՝ գիտական կազմակերպությունում կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում գիտահետազոտական աշխատանք իրականացնող, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող և գիտական արդյունք ձեռքբերող ֆիզիկական անձ:

10. **Ճարտարագիտատեխնիկական աշխատող**՝ գիտական կազմակերպությունում կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում աշխատող, բարձրագույն, միջին կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության որակավորման աստիճան ունեցող և գիտական արդյունքի ձեռքբերմանն աջակցող ֆիզիկական անձ:

11. **Գիտական կազմակերպություն**՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված և, անկախ իր կազմակերպաիրավական ձևից, գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ:

12. **Պետական գիտական կազմակերպություն**՝ պետության կողմից ստեղծված կամ պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող գիտական կազմակերպություն:

13. **Գիտական կենտրոն**՝ բարձր որակավորման գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողներ և համապատասխան գիտատեխնիկական բազա ունեցող պետական գիտական կազմակերպություն, բարձրագույն ուսումնական հաստատություն կամ դրանց միավորում:

14. **Հետազոտական համալսարան**՝ կրթական, գիտական և ինովացիոն գործունեության միասնականության սկզբունքի հիման վրա գործող բարձրագույն ուսումնական հաստատության ու գիտական կազմակերպության գործառույթները

զուգակցող պետական բարձրագույն ուսումնական հաստատություն կամ գիտական կազմակերպություն:

**15. Ազգային գիտական լաբորատորիա՝** բարձր որակավորման գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողներ և համապատասխան գիտատեխնիկական բազա ունեցող ու գիտության և տեխնիկայի զարգացման համապետական նշանակության հիմնախնդիրների լուծմանն ուղղված գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական գիտական կազմակերպություն:

**16. Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտ՝** գիտական աշխատող, գիտամանկավարժական բնագավառի աշխատող, գիտական կազմակերպություն, բարձրագույն ուսումնական հաստատություն, գիտական կազմակերպությունների և (կամ) բարձրագույն ուսումնական հաստատությունների միավորում:

**17. Գիտական և (կամ) գիտատեխնիկական փորձաքննություն** (այսուհետ՝ գիտական փորձաքննություն)՝ գիտական փորձաքննության օբյեկտի գիտական և (կամ) գիտատեխնիկական մակարդակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման, ինչպես նաև այդ օբյեկտի վերաբերյալ որոշում կայացնելու համար հիմնավորված եզրակացություն պատրաստելու նպատակով իրականացվող գործունեություն:

**18. Գիտական փորձաքննության օբյեկտ՝** ստեղծման և ներդրման տարբեր փուլերում գտնվող գիտական արդյունք, գիտական, գիտատեխնիկական ծրագիր կամ նախագիծ, ինչպես նաև գիտական կամ գիտատեխնիկական ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն:

**19. Պետական գիտական փորձաքննություն՝** պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ և պատվերով իրականացվող գիտական փորձաքննություն:

**20. Գիտական փորձաքննության սուբյեկտ՝** գիտական փորձաքննության պատվիրատուի գործառույթներն իրականացնող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ինչպես նաև գիտական փորձաքննություն կատարող իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

21. **Գիտական փորձաքննության պատվիրատու**՝ գիտական փորձաքննություն նախաձեռնող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

22. **Գիտական փորձագետ**՝ համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող և գիտական փորձաքննության օբյեկտի ուսումնասիրությունը, վերլուծությունն ու գնահատումը կատարող ֆիզիկական անձ:

23. **Գիտական դրամաշնորհ**՝ պետության, միջազգային, հասարակական կազմակերպությունների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններով գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներին գիտական հետազոտությունների իրականացման համար անհատույց և անվերադարձ տրամադրվող ֆինանսական կամ այլ միջոցներ:

24. **Գիտության ոլորտ**՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումն ապահովող տնտեսության ոլորտ:

25. **Գիտության ոլորտում պետական քաղաքականություն**՝ պետության քաղաքականության բաղկացուցիչ մաս, որն արտահայտում է պետության վերաբերմունքը գիտության ոլորտի նկատմամբ, որոշում գիտության ոլորտում պետական մարմինների գործունեության հիմնական նպատակները, սկզբունքները, ուղղությունները և եղանակները:

26. **Գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին**՝ գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման մարմին:

### **Հոդված 3. Օրենքի հիմնական խնդիրները**

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտների իրավական կարգավիճակի սահմանումը:

2. Գիտության ոլորտում պետական քաղաքականության ձևավորման և իրականացման, հիմնական նպատակների ու սկզբունքների սահմանումը:

3. Գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունների սահմանումը:

4. Գիտական և գիտատեխնիկական գործունեության տնտեսական, սոցիալական և ստեղծագործական ազատության երաշխիքների սահմանումը:

#### **Հոդված 4. Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտները**

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնում են իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2. Պետությունը երաշխավորում է.

1) գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտների գիտական ստեղծագործական ազատությունը՝ ապահովելով գիտական հետազոտությունների ուղղությունների և մեթոդների ընտրության իրավունքը.

2) պետական գիտական կազմակերպություններում գիտական աշխատողների և մասնագետների մասնագիտական որակավորման բարձրացումը և վերապատրաստումը:

#### **Հոդված 5. Գիտական կազմակերպությունը**

1. Գիտական կազմակերպությունը՝

1) ինքնուրույն է գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության կազմակերպման, գիտական ու ճարտարագիտատեխնիկական աշխատողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի և պարբերականության ընտրության հարցերում.

2) որոշում է բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, ինքնուրույն իրականացնում է աշխատողների մրցութային ընտրությունը և բաշխումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

3) իրավունք ունի օրենքով և իր կանոնադրությամբ չարգելված այլ գործունեության:

2. Գիտական կազմակերպության լիազորությունն է՝

1) գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության կազմակերպումը, գիտական հետազոտությունների կատարումը.

2) գիտական աշխատողների գիտական հետազոտությունների եղանակների ընտրության ազատության ապահովումը.

3) աշխատողների տեղաբաշխում՝ ըստ գիտական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների.

4) գիտական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը.

5) մասնագետների որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը.

6) տեղական և միջազգային գիտական, գիտակրթական և հետազոտական ծրագրերին մասնակցությունը և իրականացումը.

7) ինովացիոն ծրագրերի մշակումը և արդյունքների իրացումը, ինչպես նաև արտադրության կազմակերպումը.

8) ֆինանսների կառավարումը, ներառյալ՝ աշխատավարձի վճարումը, գիտական կազմակերպության պահպանմանը և զարգացմանը, գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը.

9) անդամակցությունը գիտական և գիտատեխնիկական միջազգային կազմակերպություններին ու միավորումներին, մասնակցությունը միջազգային կամ օտարերկրյա պետությունների գիտական և գիտատեխնիկական ծրագրերին ու նախագծերին, օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը:

3. Գիտական կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը:

4. Գիտական կազմակերպությունը միջազգային կազմակերպությունների կամ օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների հետ կնքած պայմանագրերով, համաձայնագրերով իրականացնում է համատեղ գիտական աշխատանքներ, ծրագրեր, մասնագետների փոխանակում, միջազգային կազմակերպությունների կամ օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների հետ ստեղծում է համատեղ ստորաբաժանումներ և այլն:

5. Պետական գիտական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կարող է վերակազմավորվել գիտական կենտրոնի, հետազոտական համալսարանի կամ ազգային գիտական լաբորատորիայի:

6. Գիտական կազմակերպությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

#### **Հոդված 6. Գիտական կազմակերպության կառավարումը և գիտական ղեկավարումը**

1. Գիտական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը (տնօրեն, նախագահ և այլն): Գիտական կազմակերպության կանոնադրությամբ կարող է նախատեսվել նաև կոլեգիալ կառավարման մարմինների (խորհուրդ, տնօրենների խորհուրդ և այլն) ձևավորում:

2. Գիտական կազմակերպության գիտական ղեկավարումն իրականացնում են տնօրենը և գիտական խորհուրդը: Վերջինս կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող և ուղղորդող կոլեգիալ մարմին է:

3. Գիտական կազմակերպության գիտական խորհրդի և կառավարման մարմինների թվակազմը, կազմավորման կարգը, խնդիրները, տնօրենի նշանակման և ազատման կարգը սահմանվում են կազմակերպության կանոնադրությամբ:

#### **Հոդված 7. Գիտության ոլորտում պետական քաղաքականության նպատակներն ու սկզբունքները**

1. Գիտությունը, որպես երկրի տնտեսության զարգացման, անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո:

2. Գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝

1) գիտելիքահենք տնտեսության և հասարակության ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծումը.

2) տնտեսության զարգացման նպատակով գիտական արդյունքի ներդրման խրախուսումը, ինովացիոն գործունեությանն աջակցումը.

3) գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումն ու պահպանումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի

պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրումը.

4) սոցիալական, սոցիալ-բնապահպանական խնդիրների լուծմանը նպաստելը.

5) մարդու, հասարակության և պետության անվտանգությանն աջակցելը.

6) գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության խրախուսումը.

7) գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը.

8) երկրի բնապահպանական վիճակի բարելավումը.

9) միջազգային գիտական և գիտատեխնիկական համակարգին ինտեգրումը.

10) գիտատեխնիկական մշակույթի զարգացումը և տարածումը.

11) գիտության ժամանակակից ենթակառուցվածքի և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորումը.

12) հայագիտության զարգացմանը նպաստելը.

13) գիտության հասարակական հեղինակության և գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի գրավչության բարձրացումը:

3. Գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1) գիտության՝ իբրև պետության և հասարակության գործունեության բոլոր ոլորտներում գիտականորեն հիմնավորված մոտեցումների առաջատար դերի ընդունումը.

2) գիտության և տեխնիկայի գերակա ուղղությունների զարգացման ապահովումը.

3) երկրի անվտանգության մակարդակի բարձրացմանը կամ սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող գիտական հետազոտությունների իրականացման առաջնահերթության ապահովումը.

4) հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների պետական աջակցությունը.

5) գիտական, գիտատեխնիկական ու ինովացիոն գործունեության և կրթական համակարգի արդյունավետ փոխգործակցության ապահովումը.

6) գիտության ոլորտում մրցակցությանն ու ձեռնարկատիրական գործունեությանն աջակցելը.



7) գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության ֆինանսավորման համար հիմնադրամների ստեղծման խրախուսումը.

8) գիտության ոլորտում ներդրումների խրախուսման պայմանների ստեղծումը.

9) մտավոր սեփականության իրավական պաշտպանվածությունը և դրա արդյունավետ օգտագործման պայմանների ստեղծումը.

10) գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցության զարգացումը.

11) գիտության ոլորտում պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման գործում գիտական աշխատողների, նրանց հասարակական միավորումների ու կազմակերպությունների մասնակցության համար պայմանների ստեղծումը.

12) հեռանկարային երիտասարդ գիտական աշխատողների ընտրության և խրախուսման համակարգի ստեղծումը.

13) գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության, նրանց սոցիալական, տնտեսական և իրավական պաշտպանվածության ապահովումը.

14) գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտների ֆինանսական և ժամանակակից նյութատեխնիկական բազայի ապահովումը.

15) գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտների ստեղծագործական ազատության ճանաչումը:

**Հոդված 8. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունը գիտության ոլորտում պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման բնագավառում**

1. Գիտական և գիտատեխնիկական միասնական քաղաքականության իրականացումը:

2. Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների որոշումը, հայագիտության զարգացման ծրագրերի հաստատումը:

3. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման կարգերի հաստատումը:

4. Գիտական, գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի հաստատումը և պետական բյուջեի նախագծի հետ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով ներկայացումը:

5. Գիտահետազոտական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի հաստատումը:

6. Պետական գիտական կազմակերպությունների, գիտական կենտրոնների, հետազոտական համալսարանների և ազգային գիտական լաբորատորիաների չափանիշների սահմանումը, ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը:

7. Գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունների և խնդիրների սահմանումը:

8. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի իսկական և թղթակից անդամների ընտրության, գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի պետական մրցանակների շնորհման չափանիշների հաստատումը:

### **Հոդված 9. Գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունը և գործառույթների իրականացումը**

1. Գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունն է՝

1) գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակման և իրականացման կազմակերպումը.

2) գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանը, սոցիալական խնդիրների լուծմանն ու մարդու, հասարակության և պետության անվտանգության ապահովմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացման կազմակերպումը.

3) գիտության ոլորտի զարգացմանն ուղղված բարեփոխումների ծրագրերի մշակումը և իրականացման կազմակերպումը.

4) գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման ապահովումը.

5) գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման պետական գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական

հաստատությունների ցանկի ձևավորումը՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ, և ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն.

6) գիտության ոլորտում մրցույթների կազմակերպումը, գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներին մրցանակների և գիտական դրամաշնորհների տրամադրումը.

7) պետական գիտական փորձաքննություն իրականացնող կազմակերպություններին և գիտական փորձագետներին առաջադրվող պահանջների սահմանումը.

8) պետական բյուջեի հաշվին ֆինանսավորվող գիտական կամ գիտատեխնիկական ծրագրերի և նախագծերի, ինչպես նաև կատարվող ծրագրերի հաշվետվությունների գիտական փորձաքննության պատվիրումը.

9) գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներին գիտատեղեկատվական շտեմարաններից օգտվելու հնարավորությունների ապահովումը.

10) գիտական արդյունքի առևտրայնացմանը, տնտեսական շրջանառության մեջ ընդգրկմանն ու ինովացիոն գործունեությանն աջակցելը.

11) գիտության ոլորտում միջազգային պայմանագրերով նախատեսված Հայաստանի Հանրապետության պարտավորությունների իրականացումը, միջազգային համագործակցության պայմանագրերի կնքումը և իրականացման կազմակերպումը.

12) գիտության ոլորտում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակումը և ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն՝

ա. Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների և կանխատեսումների,

բ. գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման պետական պատվերի ձևավորման, գիտական ներուժի վերարտադրության և զարգացման ապահովմանն ուղղված ծրագրերի,

գ. ասպիրանտուրայում և օրդինատուրայում ուսուցման կարգի, ինչպես նաև գիտական որակավորման իրավական հիմքերի և չափանիշների,

դ. գիտական աստիճանաշնորհման համակարգի արդյունավետ զարգացմանն ուղղված ծրագրերի,

ե. գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգի, տարակարգերի և որակավորման չափանիշների,

զ. գիտական աշխատողների՝ օտարերկրյա պետություններ գիտական գործուղման կարգի,

է. գիտական կենտրոնների, հետազոտական համալսարանների, ազգային գիտական լաբորատորիաների ստեղծման սկզբունքների, չափանիշների և կարգի,

ը. պետական գիտական փորձաքննության կազմակերպման, իրականացման և ֆինանսավորման կարգի.

13) գիտության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

2. Գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմինն իր գործառույթներն իրականացնում է պետական կառավարման համապատասխան մարմինների և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ:

### **Հոդված 10. Գիտական կադրերի պատրաստումը և որակավորումը: Գիտական աստիճանները և գիտական կոչումները**

1. Գիտական կադրերի պատրաստման ձևերն են ասպիրանտուրան և օրդինատուրան: Ասպիրանտուրայում և օրդինատուրայում ուսուցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Գիտական որակավորման իրավական հիմքերը և չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են գիտության դոկտորի և գիտության թեկնածուի գիտական աստիճաններ, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

4. Գիտական աստիճանները շնորհում են գիտական կազմակերպություններին կամ բարձրագույն ուսումնական հաստատություններին առընթեր մասնագիտական խորհուրդները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

5. Գիտական կոչումները շնորհվում են գիտական կազմակերպությունների կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

6. Գիտական աստիճանի և (կամ) գիտական կոչման առկայությունը հաշվի է առնվում գիտական աշխատողի կողմից տվյալ գիտական պաշտոնին հավակնելու դեպքում:

7. Գիտական աստիճանները և կոչումները հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրվում են Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Դիպլոմների նմուշները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Գիտական աստիճանները և (կամ) կոչումները, որոնք շնորհվել են մինչև 1994 թվականը, պահպանում են իրենց իրավաբանական ուժը և հավասարեցվում են դրանից հետո շնորհված գիտական աստիճաններին և (կամ) կոչումներին:

#### **Հոդված 11. Գիտական աշխատողի իրավունքները և պարտականությունները**

1. Գիտական աշխատողն իրավունք ունի՝

1) իր հետաքրքրություններին, ստեղծագործական ունակություններին, ինչպես նաև համամարդկային ու ազգային արժեքներին համապատասխան ընտրել գիտական և գիտատեխնիկական գործունեության ձևեր, ուղղություններ և միջոցներ:

2) գիտական և գիտատեխնիկական համատեղ գործունեություն ծավալելու նպատակով միավորվել այլ գիտական աշխատողների հետ և կազմակերպել մշտական կամ ժամանակավոր գիտական կոլեկտիվներ:

3) պատճառաբանված կերպով հրաժարվել այն հիմնարար և (կամ) կիրառական գիտական հետազոտություններին մասնակցելուց, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել մարդու, հասարակության կամ շրջակա միջավայրի վրա:

4) իր որակավորմանը, ստացված գիտական արդյունքներին, կատարվող աշխատանքի որակի և բարդության աստիճանին համապատասխան ակնկալել իր գործունեության անաչառ գնահատական և նյութական խրախուսում, ինչպես նաև վարձատրվել կամ եկամուտ ստանալ իր գիտական արդյունքի իրացումից:

5) մասնակցել պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորվող հիմնարար և (կամ) կիրառական հետազոտությունների համար հայտարարված մրցույթներին.

6) տպագրել և հրապարակել սեփական հետազոտությունների արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) մասնակցել գիտական աշխատողների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթներին.

8) գիտության զարգացման, տեխնոլոգիաների, գիտական արդյունքների, արտադրության մեջ դրանց ներդրման ու գիտական կադրերի պատրաստման համար արժանանալ գիտական աստիճանների, գիտական կոչումների, մրցանակների, տիտղոսների, պատվավոր կոչումների.

9) ազատորեն օգտագործել, տարածել և փոխանակել գիտական տեղեկատվություն, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական, ծառայողական, առևտրային և այլ գաղտնիք համարվող տեղեկատվության.

10) զբաղվել մանկավարժական գործունեությամբ, իրականացնել խորհրդատվություն, լինել փորձագետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

11) գիտական արդյունքները ներկայացնել գիտական զեկուցումների, հրապարակումների ու ատենախոսությունների պաշտպանության եղանակով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

## 2. Գիտական աշխատողը պարտավոր է՝

1) գիտական կամ գիտատեխնիկական գործունեությամբ վնաս չհասցնել մարդու կյանքին, առողջությանը և շրջակա միջավայրին.

2) հիմնարար և (կամ) կիրառական գիտական հետազոտությունները կատարել կնքված պայմանագրերին համապատասխան.

3) պահպանել էթիկայի չափանիշները և մտավոր սեփականության իրավունքը:

## **Հոդված 12. Գիտական աշխատողի ատեստավորումը**

1. Գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի ատեստավորումն իրականացվում է առնվազն հինգ տարին մեկ անգամ: Ատեստավորումը նպատակ ունի՝

1) գնահատել գիտական աշխատողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը և նրա կողմից ստացված գիտական արդյունքները.

2) պարզել գիտական աշխատողի համապատասխանությունը իր զբաղեցրած պաշտոնին:

2. Գիտական աշխատողի ատեստավորման կարգի և գնահատման չափանիշների խախտման դեպքում ատեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

3. Գիտական աշխատողների որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

### **Հոդված 13. Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությունը և թոշակավորումը**

1. Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությունը և կենսաթոշակը պետք է նպաստեն գիտական աշխատանքի հեղինակության բարձրացման ու գիտական ներուժի վերարտադրության գործընթացին, բավարար նյութական պայմաններ ապահովեն ինքնուրույն և արդյունավետ ստեղծագործական գործունեություն իրականացնելու համար:

2. Գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի վարձատրությունը բաղկացած է պաշտոնային դրույքաչափից, գիտական աստիճանի և գիտահետազոտական աշխատանքի աշխատանքային ստաժի համար տրվող լրացուցիչ վարձատրությունից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրվող պարգևատրումներից: Գիտական աշխատողի վարձատրության պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Պետությունը, տարիքային կենսաթոշակի իրավունք, գիտահետազոտական աշխատանքի առնվազն 15 տարվա աշխատանքային ստաժ, գիտական աստիճան ունեցող և պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում չընդգրկված անձանց կենսաթոշակից բացի, տալիս է ամենամսյա հավելավճար՝ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտական

աշխատողներին գիտական աստիճանի համար տրվող ամենամսյա հավելավճարների չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

#### **Հոդված 14. Գիտական փորձաքննության կազմակերպումն ու իրականացումը**

1. Պետական բյուջեի հաշվին ֆինանսավորվող գիտական կամ գիտատեխնիկական ծրագրերի և նախագծերի ընտրությունը, ինչպես նաև կատարվող ծրագրերի հաշվետվությունների (ընթացիկ և ամփոփիչ) ընդունումն իրականացվում է պետական գիտական փորձաքննության միջոցով:

2. Պետական գիտական փորձաքննություն իրականացնում են Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, իրավաբանական անձինք, որոնց կանոնադրությամբ թույլատրված է նման գործունեություն, ինչպես նաև գիտական փորձագետները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Գիտական փորձաքննության ֆինանսավորման աղբյուրը որոշվում է գիտական փորձաքննության պատվիրատուի կողմից:

4. Պետական գիտական փորձաքննության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Պետական գիտական փորձաքննության կազմակերպման, իրականացման և ֆինանսավորման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Պետական գիտական կազմակերպությունների պատվերով իրականացվող փորձաքննությունը կարող է ֆինանսավորվել այդ կազմակերպությունների բյուջետային միջոցների հաշվին՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման շրջանակներում:

#### **Հոդված 15. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորումը**

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն.

2) հիմնադրամները, ներառյալ՝ օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հատկացումները, քաղաքացիների ներդրումները և այլն.

3) դրամաշնորհները.



4) վարկերը.

5) գիտական արդյունքների ներդրումից և իրացումից գոյացած միջոցները.

6) գիտական, գիտատեխնիկական, հրատարակչական, խորհրդատվական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեությունից գոյացած միջոցները:

2. Գիտության ոլորտում պետական բյուջեից ֆինանսավորումն իրականացվում է ծրագրային սկզբունքով՝ մրցութային կարգով:

3. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորումն իրականացվում է բազային, նպատակային և դրամաշնորհային ձևերով՝

1) բազային ֆինանսավորումը հատկացվում է պետական գիտական կազմակերպություններին ու բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական կազմակերպությունների և (կամ) գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքների պահպանման, գիտական կադրերի պատրաստման նպատակով: Բազային ֆինանսավորման պետական գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

2) նպատակային ֆինանսավորումը հատկացվում է գիտական կազմակերպություններին ու բարձրագույն ուսումնական հաստատություններին կամ դրանց միավորումներին՝ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայություններին համապատասխանող, հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և գիտամշակութային հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը, հասարակության կենսական պահանջների բավարարմանը, արտաքին շուկա մրցունակ արտադրանքի արտահանմանը՝ նպատակաուղղված համալիր ծրագրերի իրականացման նպատակով:

3) դրամաշնորհային ֆինանսավորումը հատկացվում է՝ որպես գիտական դրամաշնորհ՝ գիտական աշխատողներին և գիտահետազոտական խմբերին (կոլեկտիվներին)՝ դրանց նախաձեռնությամբ ներկայացված և նոր գիտական

հետազոտությունների կամ գիտատեխնիկական նոր մշակումների հանգեցնող հետազոտական նախագծերի իրականացման նպատակով:

4. Պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային և դրամաշնորհային ֆինանսավորման ծավալների միջև համամասնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով:

5. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման համար յուրաքանչյուր տարի պետական բյուջեի ծախսային մասում նախատեսվում են նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս հատկացումներ:

### **Հոդված 16. Գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցությունը**

1. Գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցությունն իրականացվում է գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի, շահագրգիռ գերատեսչությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից:

2. Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց և գիտական կազմակերպությունների հետ համատեղ կարող են ստեղծվել լաբորատորիաներ, գիտական կազմակերպություններ և կենտրոններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

### **Հոդված 17. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից՝ ուժը կորցրած ճանաչել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքը: